

ԼԻՈՆԱՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՈՒԽՏԱՎՈՐՆԵՐՈՒ ԱՅՑԸ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔ

Քանի մը տարիներե ի վեր գեղեցիկ ավանդություն դարձած է Սփյուռքի կանական թեմերու պատկանող երիտասարդներու այցը Մայր Հայրենիք: Վերջին տասնամյակի ընթացքին հարյուրավոր սփյուռքահայ երիտասարդներ, հատկապես Ամերիկայի Միացյալ Նահանգներեն և Անգլիայեն, պատեհությունը ունեցան այդ ուխտագնացությունը կատարելու իրենց նախնիքներու երկիրը: Հարկ է նշել այստեղ, որ այս գեղեցիկ ձեռնարկին անմիջական ջատագովն է ապգիս Վեհափառ Հայրապետը, որուն հայրական սերը և հոգատարությունը Սփյուռքի հայ երիտասարդներու հանդեպ մշտական է:

Այս տարի, Ամենայն Հայոց կաթողիկոսի բարեհաճ կարգադրությամբ և նախաձեռնությամբ Մայր Աթոռի երիտասարդ միաբան հոգեշնորհ Տ. Զատիկ աբեղա Ավետիքյանի, քսանութ լիոնահայ երիտասարդներ հրավիրվեցան Մայր Աթոռ: Խումբը Լիոնեն ճամփա ելավ հուլիս 9-ին և ուղղակի թռիչքով Երևան հասավ: Այս ուղևորության կազմակերպչական բաժինը հանձն առած էր «Սևան» ճանապարհորդական ընկերության տնօրեն, լիոնահայ ծանոթ ապգային պարոն Վարուժան Սարգիսյանը: Երիտասարդները անմիջապես տեղավորվեցան Բյուրականի «Հայկաշեն» կաթողիկոսական ամառանոցը: Հուլիս 10-են մինչև ամսվան վերջը կազմակերպվեցան հայրենի, երգի և պարի դասեր: Դասընթացքները տեղի ունեցան Երևանի Սայաթ-Նովայի անվան երաժշտական դպրոցը, շնորհիվ Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի նշանակած դասախոսներուն:

Երիտասարդները ամեն օր ունեցան պրոսապտույտներ՝ Սևան, Դիլիջան, այցելեցին Էջմիածին քաղաքի վանքերը, Խոր-Վիրապի, Օշականի, Սաղմոսավանքի, Գեղարդի դարավոր սրբավայրերը, ինչպես նաև Սարդարապատի ու Երևանի պետական թանգարանները, Մաշտոցի անվան Մատենադարան և Ժամանակակից արվեստի կեդրոն: Մայր Աթոռի հյուրերը ներկա եղան կանական մշակութային միջոցառումներու:

Հուլիս 12-ին խումբը պաշտոնապես ընդունվեցավ Վեհափառ Հայրապետի կողմե: Երկրորդ հանդիպում մը տեղի ունեցավ հուլիս 23-ին: Խումբի անունեն շնորհակալության խոսքեր ըրին Սահակ սարկավագ Սուքիասյան և օրիորդ Հերմինե Տեմ: Օրիորդ Հերմինե Տեմը ասաց.

«Ձերդ Սրբություն,

Քաջ գիտենք, որ Ձեր ժամանակը շատ սուղ ըլլալով այսօրվա հանդիպումը մեծ պատիվ մըն է մեզի համար:

Մենք Լիոնեն իսկ ըմբռնած էինք այս ուղևորության կարևորությունը և մեզի համար առաջվնե մեծ ուրախություն մըն էր:

Շատ հաճախ սփյուռքահայերուս համար Հայաստանը հին պատմություն և երազանք է միայն ու մեր միակ կապը մեր անցյալին հետ մեր Եկեղեցին է: Այսօր մեզի համար Հայաստանը մարմնավորվեցավ: Իր ժողովուրդը, իր բնությունը, մեր այցելած հուշարձանները կայն կենդանացուցին: Մենք ի մասնավորի շատ սիրեցինք Սուրբ Գեղարդը, այն հանդարտ, ժայռափոր վանքը, ուր ամեն ինչ բնականորեն պարզ է և միաժամանակ հոյակապ ու վեհ:

Ամենակարևորը մեզի համար եղավ, որ մենք Սուրբ Էջմիածնով ապրեցանք ու մեր սրբավայրին հետ ատոիճանաբար ամբողջապես մտերմացանք:

Բառերը կպակին, Վեհափառ Տեր, մեր երախտագիտությունը արտահայտելու այն բանին համար, որ շնորհիվ Ձեզի, մենք կարողացանք մեր նախնիքներու հողին հետ

հաղորդվիլ: Թույլ տվեք, Վեհափառ Տեր, որ ողջ խումբին անունով Ձեր սուրբ աջը համբուրեմ և ստանամ Ձերդ Սրբության հայրական օրհնությունները»:

Հանդիպումին ժամանակ երիտասարդ և տաղանդավոր նկարիչ Ռեմի Սիրոբը իր գործերեն մեկը նվիրեց Վեհափառ Հայրապետին: Գործը անվանված է «Նորվան սրբական և Ձատիկ աբեղա»:

Քանի մը օր հետո, հուլիս 29-ին, տեղի ունեցավ Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի կազմակերպած ընդունելությունը: Հանդիսությունը կվարեր կոմիտեի նախագահ պարոն Կառլեն Դալլաքյանը: Պարոն նախագահը բարի գալուստի քանի մը խոսքերե վերջ ներկայացուց հայրենի կառավարության ծրագրերը երկու հազար թվականին համար, որոնք պարզ ցույց կուտան, թե ինչ նորանոր նվաճումներ պիտի արձանագրե Հայրենիքը ապագային: Հանդիպումին ավարտին յուրաքանչյուր երիտասարդ ստացավ հուշանվերներ պարունակող փոքրիկ ծրար մը: Խումբին անունով շնորհակալության խոսք արտասանեց հոգեշնորհ Տ. Ձատիկ աբեղան, որ արտահայտեց խումբի անդամներուն մեծ տպավորությունները Հայրենիքեն, որ անոնք ավելի հայ զգացին իրենք զիրենք և հայկական առողջ ոգիով զորացած կվերադառնան տուն:

Խումբին վերջին այցելությունը Մայր Աթոռ եղավ հուլիս 29-ին: Վեհափառ Հայրապետը բացակա ըլլալով, լիոնահայ երիտասարդներուն ընդունեց գերաշնորհ Տ. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյան: Այս առթիվ Ֆրանսայեն բերված բյուրեղապակյա արծիվ մը հանձնվեցավ Սիոն սրբազանին: Սրբազան հայրը Վեհափառ Հայրապետի կողմն շնորհակալություն հայտնեց այս նվերին համար ու բարի ճանապարհ մաղթելե վերջ կոչ ըրավ երիտասարդ ուխտավորներուն, որպեսզի չմոռնան Մայր Հայրենիքը և հաճախ այցելեն իրենց նախնիքներուն երկիրը:

Հաջորդ օրը, վաղ առավոտյան, «Զվարթնոց»-ի օդանավակայանը, սուրբ Արարատի լանջերուն տակ լիոնահայ ուխտավորները դիմի նվագակցությամբ իրենց հրաժեշտի քոչարին պարեցին հայրենի երկինքի տակ:

Հուլիս 30-են օգոստոս 4 խումբը եղավ Լենինգրադ և Մոսկվա: Ֆրանսահայ երիտասարդները այցելեցին զույգ քաղաքներու տեսարժան վայրերը, ինչպես նաև տեղվույն հայկական եկեղեցիներ:

Օգոստոս 4-ին խումբը վերադարձավ Ֆրանսա, իր հետ բերելով «Արարատի ձյունեն, Սևանա ջուրեն և ափ մը Էջմիածնի սուրբ հողեն»:

ՍԱՀԱԿ ՍՐԿ. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՀՐԱՎԵՐՈՎ ԼԻՈՆԻՑ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔ ԱՅՑԵԼԱԾ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ